

ԱՐԱՅԱԳԱՅԱՅ

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 132

31 ՅՈՒՆԻՍԻԱՐ 1914

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԴԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ



ՏՕՂԱՑՈՅՑ

- Փետրուար 1 † Կիր. թկ. Առաջաւորաց բարեկենդան.
- 2 Բշ. զձ. Տեառներնդառաջ: Եւ Ա. օր պահոց առա-
ջաւորաց
- 3 Գշ. զկ. Բ. օր պահոց առաջաւորաց
- 4 Դշ. զձ. Գ. » » »
- 5 Եշ. զկ. Դ. » » »
- 6 Ուր. աձ. Ե. » » »
- 7 Շք. ակ. Սրբոյն Մարգարի զօրավարին եւ որդւոյ
նորա Մարտիրոսի եւ 14 զինաւորացն:

դելու է ըսին՝ ազատ ձգելով իւրաքանչիւրը իւր կարծեաց մէջ։ Այս՝ յայտնապէս հակասութիւն մի է և չ'ազատեր զմարդն անստուգութեան, տարակուսի յուսահատ վիճերէն։ Ընդհակառակն Այո՛ն և Ո՛չն իրար խառնելով, իրարու հետ չփոթելով, ճշմարտութիւնը լաթիւրինդոսի մը մէջ կը ձգէ և Լուկիանոսի քարայրը կրկին կուլ կուտայ զանի։

Բայց կարծիքներն միեւնոյն ոսպնեակի զանազան երեսներն չեն կրնար նկատուիլ և ըլլալ այսպէս միեւնոյն ճշմարտութեան լրացուցիչ մասերն։ — Ո՛չ, բացարձակապէս ո՛չ, ոսպնեակն մէկ ձուլածոյ է. իւրաքանչիւր կարծիք ուրոյն ոսպնեակներ պիտի ըլլային, ո՛չ թէ միեւնոյն ոսպնեակին զանազան երեսներն։ Ասոնք ստոյգ են և իրական, մինչդեռ կարծիքներն անստոյգ ու ենթակայական են։ Ոսպնեակի երեսներն գիրար կ'ամբողջացնեն, կը զրկախառնուին միեւնոյն առանցքի շուրջը, մինչդեռ ներհակ կարծիքներն գիրար կը վանեն։

Բայց չէ՞ կարելի հակասական կարծիքներն միեւնոյն բոլորակի ճառագայթներն նկատել. ո՛չ. միեւնոյն բոլորակի ճառագայթներն մէկ ամբողջութիւն կը կազմեն, գիրար կը լրացնեն, մինչդեռ հակասական կարծիքներն գիրար կը ջրեն։ այդ ճառագայթներն միեւնոյն կեդրոնի շուրջ կը յածին, միեւնոյն առանցքի յեցած են, միեւնոյն կէտէ կը մեկնին, ո՛չ այնպէս հակասական կարծիքներ որոնք իրարու համաձայնութեան ո՛ր և է կէտ մը չունին և չեն կրնար ունենալ մինչեւ որ հակասական են։

Կարծիքն մինչեւ որ կարծիք է ճշմարտութիւն չէ. նա ենթադրութիւն է, սա դրութիւն. նա կարելիութեան մէջ անորոշ է, սա իրականութեամբը որոշ, նա քաղաքականութիւն՝ սա մի. ասոր համար երբ կարծիքներու մը դիմաց երեւան գայ ճշմարտութիւնն՝ անոնք կը ցրուին ու կը դադրին՝ ինչպէս մէզն ու մուրը արեւուն առջեւ։ Օրինակի ազագաւ. խնդիր է բնագիտութեան մէջ թէ արեւուն լոյսը ո՛րակից առաջ կուգայ. այլեւայլ ենթադրութիւններ կամ կարծիքներ կան. ոմանք կ'ենթադրեն թէ իր ամբողջ

ծաւալին՝ ներս ու դուրս առձգումէն կ'արտադրուի լոյսը. ուրիշներ կը կարծեն թէ արեւուն վրայ ահագին ուժգնութեամբ ինկող ու շարունակ թափուող մարմիններու բռնկումի հետեւանքն ըլլայ. ուրիշներ կը համարին թէ արեւը՝ իր շուրջը գտնուող մթնոլորտի հետ շփումով բռնկած է և կը մնայ այնպէս իր արագ թաւալումովն։ Երեք ենթադրութիւններն ալ կայծիք են. յայտնի է երրորդն ստուգուի՝ առաջիններն կը դադրին կարծիք ըսուելէ և գիտական սխալներու կարգը կ'անցնին. ըսել է թէ ճշմարտութիւնը կը վանէ կայծիքը, ստուգութիւն և տարակոյս միեւնոյն նիւթի շուրջը չեն կրնար մնալ։ Ենթադրութիւններն՝ քանի որ կը մնան այնպէս կարծիքական, ազատ է մարդս մէկը կամ միւսը ընդունելու. բայց երբ ճշմարտութիւնն ստուգապէս երեւան գայ՝ հարկ է անոր հաւանիլ և այս հարկը պէտք մ'է, բնական պահանջ մը մտքի, որ իր խուզարկութեանց, հետազոտութեանց մէջ վերջապէս կ'ուզէ հասնիլ այդ սահմանին։ Եւ սա չի վտանգեր ազատութիւնը, զայն չի բռնաբարեր, ընդհակառակը կ'ազատէ զայն իր անորոշ ծփանքներէն. որոշ ճամբու վրայ կը դնէ առանց կասեցնելու, խափանելու անոր շարժումն ու ընթացքը։ Զարգացումն ալ այս ընթացքով միայն կարելի է։

Ամէն ճշմարտութիւն կարծիքի վերածելու տենդը կամ լաւ եւս ճշմարտութիւնը կարծեաց հետ չփոթելու դրութիւնը անաւոր անկումի մղեց մարդկութիւնը, վասն զի տրակարացաւ մարդկային նկարագիրը և անվրաստանիլի եղաւ ընկերական կենակցութիւն ու յարաբերութիւն։ Ի՞նչ է նկարագիր. հոգեկան վիճակի ցոլացումն է։ — Ո՞ր մէկ հոգեկան վիճակի. որոշ ու հաստատուն վիճակի, որ Այոյի և Ո՛չի մէջ չի խաղար, որ չի վաւրանիր, որ չի ծփար, որ գոյն չի փոխեր ամէն վայրկեան, որ սկզբունքի վրայ հիմնուած է, որուն Այոն Այո՛ է Ո՛չն ոչ, որ պատկեր մի է ճշգրիտ գծերով և ո՛չ անորոշ, որ մէկ խօսքով հաստատուած է ճշմարտութեան վրայ։ — Դրէ՛ք հիմա ճշմարտութեան

տեղ կարծիքը, մարդուս միտքը կը սկսի
անհաստատ, յեղյակուկ լլլալ, անոր կը հե-
տեւի կոյր կամքը, կը խախտի հոգեկան վի-
ճակը և անոր ցոյքը — նկարագիրը — կ'ըլ-
լայ անհաստատ, փոփոխական. Գամէլէն
մը որ միջավայրին համաձայն գոյն կը փոխէ,
լպրծուն ձուկ մը որ ձեռքէ կը խռուսափի,
պզտոր ջուր մը որ անվստահութիւն կը ներ-
շնչէ: Եթէ այսպէս կազմուի ամէն անհատ,
ինչ կ'ըլլայ. մարդկային ընկերակցութիւնը
կը լուծուի, հազարակցութիւնը աճպարա-
րութիւն մը կ'ըլլայ, խօսակցութիւնն՝ խո-
րհու արհեստ մը, շաղկապութիւն մը,
իրարմէ միտք ու գաղափար ծածկելու խնա-
տակութիւն. ինչպէս ուղեկցին ընդ վերա-
ծնունդի(21) նեղխտկներն, որոնց սկզբունք-
ներն լսեցինք քիչ առաջ. Ուր կերթայ այս-
պէս մարդկային ընկերութիւնը, կը ցրուի, կը
քանդուի: Դրէ՛ք այս խաբուսիկ նկարագիրը
և ըստ այնմ գործելու սկզբունքը ընտանեաց
մէջ և զուք զայն անվստահութեան բոյն մը
կը դարձնէք, և անվստահութեամբ ամու-
սիններու փոխադրած հաւատարմութիւնը կը
խղէք, դաւաճներն իսկ խորք կ'երևին ծնո-
ւոց և ընտանիքը կը ցրուի: Դրէ՛ք քաղա-
քային կենաց մէջ և զայն տակն ու վրայ կը
յեղաշրջէք, այր առաջակաց կ'ըլլան մեր
կրօնականներն, դաւադրութեան, իրարու տուն-
ձգութեան որջեր կը դառնան վաճառու-
նոցնիր ու պաշտօնատներ: Դրէ՛ք ազ-
գերու քաղաքական վերաբերումներու գոր-
ծին մէջ և կ'ունենաք նենգաւոր, ժողո-
ւոքի շահագործող, աշխարհ աւերող այն
շարժումը, որ դիւանագիտութիւն ըստած է
և որուն, աւա՛ղ, երկունքը ահեղազորող
թնդանօթներու աւերիչ որոտումն է յաճախ,
իսկ ծնունդն՝ ազգեր տատանորդող մահ:
— Ի՞նչ կը խորհիք, պատուական ընթեր-
ցողք. արդի աշխարհի, այժմեական գէպքե-
րու բացատրութիւնն է առածս և ահա ուր
կը տանի ճշմարտութեան թուփն արհա-
մարհող ազատութիւնը: — Զգեցէ՛ք պահ մը
որ այդ տեսակ ազատութիւնը վարազանայ
արիւնարբու սուրբերու շողջողումով, հրձիգ,
հրացան գործիներու ճայթիւնով, խնդանօթ-

ներու որոտումով և արեամբ ներկուին դաշ-
տեր, քանդուին քաղաքներ. քստմնելի է
տեսարանը, կը խռովի հոգի և միտք բայց
լաւ կը պատկերացնէ թիւրիմաց Եղատու-
թեան գաղափարն ու հետեւանքը:

(Շարունակելի)

ԵԱԶԸԳ ԶՕՃՈՒԳԼԱՐԸՄԸԱ

(Տեղումի)

Օ կիւնաէն իթիպարէն Հանրի բազար
կիւնլէրի բէաէր վէ վալիտէսիլէ պիրլիքաէ
«Կիւլիւնճ առէթլէր մէնգարէսինէ» կիթմէք
իսթէմէզաի:

Մատամ բէք մէյուս օլմագտա, զայէթ
թէէսիւֆ իթմէքաէ իտի: Հաթթա պաղը
տէֆալար աճը աճը կէօլ հաշլարը պիլէ տէօ-
քիւյօրալ: Հալպու քի էֆէնալ: քէնտի սիւ-
քիւնլըր մուհաֆապա էտէպիլիօր վէ գորը-
սընա սա:

— Մարի, չօճուգ օլմա, նէ հաբարսըն,
կէնճլիք կէշմէլի տիր, տէյօրալ:

Բէնտի պու ֆիքրլիէ մէսիլի, օլլունա
բարս սա վէրիտի, վէ էվլատըր բարս-
տան պաչգա քէնալանէ բապթ իտէն տիկեր
պիր բապթիա գալմամը օլտուղընը արթըգ
հիսս իտիյօրալ: մա մաֆիյս պու բապթիա
պիր ալթուն պաղ օլտուղը միւնապիլէթլէ,
պիւսպիլթիւն օնաան իւսիտընի տէ քէմմէ-
յօրալ:

Հանլի միւքէմմէլ պիր քէյֆ սիւրմէքաէ
իտի... էյլէնճէ մահալլէրինտէն պարի կէլ-
մէզ, պիւթիւն գահվէլանէլէրի տօլաշըր,
բէք կէն օլարապ էվիլէ տէօնէրաի... թա-
պիր խորա սա կիպի ագըյօրալ...

* *

Ետզ մէվաիմինին պիր էօյլէն սօնունտա
Հանրի պիր թէլէկրաֆ ալըր: Արդատաշար
իլէ պիրլիքաէ օթօմօպիլ իլէ հօլա չրգար,
վէ սէքիլ քիլօմէթրօ ուղագտա օթօմօպիլ-
տէն տիւշէր: Հալի զայէթ աղըրաշըր...

... Իւշ աաաթլըգ պէպիլէ վէ հիւրէք
թիւքէտիճի էնտիշէրտէն սօնրա բէաէր ղէ
վալիտէսի մահալլէ գաղայա հէթիշիլէր:

Հանրի, գապուրդա քէմիքլէրի գըրըմըն
օլտուղընտան տէնչէթլի աղըրլար իննաւ
չապալայարագ պիր քէօյլիւ էվինտէ հաթ-
մաբտա իտի: Էպէվինինի թանըտը: Կիւճ
հալ իլէ ծնւարա պիր իքի լազըրտը սէօյլէտի
վէ ծնւարըն միւքէտտէր էլլէրինի էլինին ի-
չինտէ թութա գալտը:

Վազըթ հօգ իտի:

— Ծանըմ, պիր քահանայ կէթիքլիւմ,
տէր վալիտէսի:

Օրատան իքի քիլօմէթրօ ուզագտա պու-
լունան ժողովրդապետի չաղըրմայա պիր ա-
տամ կէծնտէրիլի:

Զավալը վալիտէսի քէքիգտիրապը տա-
գիպալար կէչիրիթօրտը: օլլունըն թէրլի եիւ-
զիւնիւ սիլտիյի սըրատա, պիր թարաֆտան
տա տուա էսիթօրտը... Զաթէն ինսան տար-
տա օլուրտա ճէննէթին պիւթիւն սուրըլա-
րընը իմտատա չաղըրմայը քէք էյի պիլի:

Նիհայէթ քահանայ եէթիլտի:

Բէտէր, վալիտէ ծնը պիր թարաֆա չէ-
քէքէք Հանրինին հալինի ծնա մուլթաա-
րէն անլաթտըլար. « Աման, վարդապետ,
չօգ թաթլը սէօյլէյին, օլմայա քի սիլի կէօ-
րիւպաւէ գօրգսուն... բարապըլը չօգ սէվ-
մէզ... նէ հաքարսըն, զավալը չօճուգ էօյլէ
մուալլիմէր էլլինէ տիւչտիւ քի...: Սոստո-
վանանքտան հազ իթմէզտի... ամմա ուսուլ
իլէ...»

Էյի քահանայ հաթաղա հապաշըր:

Սաթթա ույգույա տալմըն կիպի կէօրիւ-
նիւթօրտը... եիւզիւնիւ տիվարա տէծնմիւշ
հարաքէթսիզ գալմընտը:

Վարդապետ սուրէթի տօսթանէտէ ծնուն
իտինի վէրիւր վէ կէօյա ծնը ույանտըրմագ
իսթէրճէսինէ հալաշճա ծնա տօգունարագ,
գուլաղընա էյիլիւր վէ:

«Սէվկիլի օլլըմ, աղըր սուրէթտէ իսա-
թասըն... էյեր զիճատընըն հալինի սըրա-
լայաճագ օլուրտան, պէլքի աղըրլարընա պիր
իսաֆիֆիլէք տույարսըն», տէր:

Հանրի կիւճ հալ իլէ պաշընը գալտըրըր,
կէօզիւնիւ աչար վէ նազարընը քահանանըն
իւզէրինէ հասր էյլէր: Նարըն էօլմիւշ օլան
պու վիճուտտա վար օլան հայաթ եիւզիւնէ

չըգար, աղըրլարը սէպէպիյլէ պիւզիւմիւշ օ-
լան սիմասընտա պիր էսէրի նէֆրէթ կէօ-
րիւնմէյէ պաշլար վէ զաթէն սէծնմէք իւզրէ
օլան սէսիյլէ:

— «Սա՛յր, իսթէմէմ, րէճա էտէրիմ, չէ-
քիլինիզ», տէր:

Քահանայ թէքլիֆինի թէքրար իտիննէ:

— Ծանըմ, շու բարազը տիշարը չըգարըն
սըգըրլօրտւմ, տէր:

Պու չապասը իւզէրինէ պաշը սիւշէր,
վէ Հանրի զաթէն էօլմիւշտի:

*
* *

... Քահանայ րէտէր վէ վալիտէյէ պե-
յանը թաազիյէթ իտէրէք չէքիլի կիտէր:

Քիլիսայա ալտէթինտէ պաշլար տիւչիւն-
մէյէ քի:

— «Այթը այտան պէրի պու իւչիւնճիւ
տէլիգանը տըր քի իսաթալըզարը վագ-
թընտա չաղըրլօրտւմ վէ թէօվպէ էթմէք
իսթէմէյօրլար... աշխարհական մէքթէպլէ-
րինին իճատընտան էվվէլ պէօյլէ տէյիլտի...
սօն սօնը կէնճլէր թէօվպէյէ կէլիլէր իտի...
չիւնքի ծնւարըն տէրունի գալպինտէ պիր ի-
ման թօխումը վար իտի քի հայաթըն ույ-
գունտուզըլարըն ալթընտա պիլէ նէմա պու-
լուրտը... պու կիւն իսէ բուհտա մուրտար-
ըզ մլվճուտ օլտուղը հալտէ, օ Ալլահանի
թօխումտան հիչ պիր էսէր հօգ տըր...»

Օ ազշամ կիւնէշ էշիայը զէրինինի պուղ-
տայ պաշազարը իւզէրինէ նէշը իտէրէք,
զրուպ էյլէտիյի սըրատա, թապիւթըն պու
գատար կիւզէլլիյինէ հայրան օլան քահա-
նայ քէնտի քէնտինէ:

— «Նա՛ Րապպի՛ պու գատար մահսուլ-
տար վէ պու գատար լաթիֆ օլան շու թօր-
րագ, պու կիպի ախլագի պէտպախթըլարա
սահնէ օլմալը՞ մը իտի», տէր:

Պատէհու առէթա պիր քեսպուս տէֆ
էթմէք իսթէյօրճատընա ալնընը օվալար, վէ

«Նազըզ չօճուզարըմըզա» տէյէրէք տէ-
րին պիր ա՛ն չէքէր:

ԵՐ. ՏԵՐ ԿՈՄԻՏԵԱՍ ՆԱՀԱՏԱԿԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ (*)

Վ. Ա. Ս Ն

յեթին ժամանակիս ազգիս մերոյ հախառակութեան որ ընդ միմեանս վասն Գարոյիկութեան, եւ յազազս որոյ յայտնելոյ ունեմն երկրորդ յուսաւորիչ կոչեցեշոյ յունանց, եւ վասն նորին գործոց եւ վարուցն, եւ վասն համախոնից նորին:

(Շար. եւ վերջ)

Եւ իբրեւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսին մինչ չնորհեցան ի յարքունուստ երկու Ս. Աթուղն ի վերայ երկուց Աստուածաբան վարդապետացն եւ վասն այնորիկ բազումք ուրախացեալք ցնծացան եւ օրհնէին զԱստուած, այնք որք խաղաղութեան սիրողք էին: Բայց ոմանք որք որդիք խռովութեան էին ի խոր խոցեալք արամեցան մինչեւ ի մահ, եւ յայնմ աւուր յորում նորոգեցան Պատրիարքութիւնքն, յերեկոյեան ժամուն ի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյն, ոմն Բահանայ մականունն ձեցի կոչի, ծերացեալ աւուրքք աւագերէց լեալ՝ ելեալ ի բնին առ ի ծանուցանել ժողովրդեան զպատրիարքութիւնն զպարգեւելան ի թագաւորէն: Եւ մինչ նոր սկսեցեալ զբանն՝ յանկարծ գրոհ առեալ ոմանք ի վայր քարչեալ զնա ի բեմէն եւ ընկեցեալ եւ կռտեալք ի վերայ արացի եւ բռնցի հարեալ ծեծէին, իսկ նա հին աւուրքք գողով եւ ալեւոր եւ միայնակ, եւ նոքա բազումք եւ ուժեղք՝ քստ կամացն իւրեանց զրոյմեալ զնա իբրեւ զուրդս, եւ ապա այլոց հասեալք հազիւ առեալ զնա ի ձեռաց հարկանողացն ազատեցին: Արդ տեսէք եղբարք, միթէ այն է օրէնք եւ սահման Գրիստոնէութեան որ աշխարհականն զքահանայն ի բեմէն քարչեալ եւ հարկանիցէ առաջի Սրբոյ սեղանոյն ի մէջ Եկեղեցւոյն: Համարիմք թէ քահանայն կարի անարդ եւ մեղաւոր իցէ, ոչ է պարտ աշխարհականաց զձեռս արկանել առ եկեղեցականս եւ առ

փոքրագոյն աստիճանաւորս, թող թէ առ քահանայս: Ո՛վ երկրորդ Լուսաւորչի համախոնք, հարցէք զկանոնն Սուրբ Լուսաւորչին մերոյ եւ տեսէք միթէ գրեալ Սուրբ Լուսաւորիչ այսպիսի թիւր կանոնք: Բայց դուք ահա զկանոնս Աւետիք փաթրիկին ձերոյ եւ նորին աշակերտ զԻզմիրցունն կատարեցիք, որպէս որ նոքա զքահանայսն ծեծէին, վասն որոյ եւ դուք աշակերտեալք նոցա եւ ուսեալք ի նոցանէ ծեծէք զքահանայս:

Իսկ ի վաղիւն գնացեալ գանգատ արարին Վէզիրին, եւ նա հրամայեաց վաղվաղակի ժողովել զնոսա, որ եւ ժողովեցին յայնմ աւուր զարս միտասան եւ ածին ի պալատ Վէզիրին, եւ առաքեաց զնոսա ի քիւրէկ ի նոյն օրն եւ ոմանք փախեան: Եւ յես այն նորիկ զարս չորս եւս առաքեցին ի քիւրէկ, բայց ոմանք ի նքջանէ աշխարհականք էին եւ ոմանք կարգաւորք:

Եւ քահանայ ոմն Հարարարոյ Սէլուկ եւ Սալօզ որ եւ զտունս քրիստոնէիցն յորժամ կոխէին յառաջնունն եւ մինն ի նոցանէ սա էր: Եւ վէքիւն Աւետիք Փաթրիկին՝ որ զկնի Իզմիրցունն նստաւ վէքիլ, սա յառաջ այրի երէց գողով Եզնկացի եւ յանցեալ ամիս սեագլուխ եղեւ միանգամայն վարդապետ Մարտիրոս անուն, որ զուղղուն էր գերեզմանացն որ ի Պալլադին, եւ զղիշերս ի քիւրհաներուն պառկէր, վասն որոյ եւ Բիւլհանձի անուամբ վերապատուեցաւ: Եւ միւս այլ սեւագլուխ Յովհաննէս անուն վանեցի որում կոչեն Ծոբերեցեց-լաջ, որ եւ ինքն իսկ թիւրաղէմ եւ ծուռ բերան գողով, զսա նուիրակ Վանայ առաքեալ Աւետիք փաթրիկին, եւ մտեալ ի նաւ զնայր ծովովն Պոնտոսի, եւ մինչ մերձենայր ի Պոնտոսն Տրապիզոն եւ դարձեալ անախ եկն յԻստոմպոլ: յայնմ ժամանակի՝ որ Ստամպոլի մէջ խռովութիւն կայր, եւ վեհն իւր ի կլայն Եօթնեակի թանտի, եւ յորժամ տեսին զսա ծանօթքն իւր, հարցանէին թէ վարդապետ, ո՞չ ապաքէն դու նուիրակ Վանայ առաքեցար, որ եւ մտեալ ի նաւ գնացեր, գոնէ ամիս մի է: Արդ զիմրդ շոյտ դարձար: Որոց պատառխանեալ Ծուռերեցեց-լաջ Վարդապետն եւ

* Գալ թուով պիտի սկսինք հրատարակել Տ. Կոմիտասայ երկրորդ գրութիւնը, (Տես թիւ 103, էջ 435):

ասէ՛, այո՛՝ այդպէս է որպէս ասէ՛ք։ Բայց մինչ զնայի՝ յանկարծ ի միում գիշերի տեօի ես ասէ՛ յերազի զի երեւեցաւ ինձ Սուրբ Լուսաւորիչն եւ ասէ՛ ցիս . «Եր երթաս։ Ս. սեմ նմա, ի Վան»՝ վասն նաւիրակութեան։ Եւ ասէ՛ ցիս թէ մի՛ երթայցես ի Վան, այլ ցարձ եւ գնա յիստամպօլ, քանզի ինձ պիտոյ ես զու անդ . ե՛րթ Ստամպօլ եւ քարոզեա՛ անդ զհաւատս իմ։ Արդ զարս պատուէր ատի ի նմանէ ի տեպեան եւ եկի այսր։ Եւ զաւախս զայս ուր եւ գնայր պատմէր ամենեցուն, որ եւ մեք խկ լուաք ի բազում հաւատարիմ արանց, որ նոցա այդպէս պատմեալ էր ինքն, որպէս պրեցաք։ Եւ տակաւին զսուտ յայտնութիւնս քարոզէր մարդկան ի քաղաքն Ստամպօլ ո՛ւր եւ շրջէր . որ եւ եհաս նմա քարոզել զնոյն յայտնութիւն ի վիճակս թէրփանային, զի եւ անդ եղեալ փայլանիցն եւս քարոզեցէ՛ եւ անդ մտեալ ի ցերեկի զնոյն քարոզէ ընդ ընկերակիցան զքթանա զգզելով, եւ զգիշերան հոկէ զչարիս խոկալով եւ խորհելով, եւ այն ի պատճառս սուտ յայտնութեան իւրոյ։

Բայց աստ գիտելի է՝ զի Աւետիքեանքն տակաւին ոչ զաղարէին, այլ միշտ ջանային եւ սպասէին ի ռ. պող ժամու, որ եւ գտին զժամանակն ֆարաէնտի¹։ Քանզի նոր թագաւորն Սուլթան Ահմէտ, հոկտեմբերի ամսոյ քսան եւ երկու ուրբաթի օր զպատիւ կերեալ չալըզ Ահմէտ աղային որ Եէնիչարեացն աղայ էր, եւ ի նոյն ամսոյ երեսունին չարաթի օր զնա մանդուլ արար եւ արտաքսեաց զնա ի Կիպրոս եւ զԵօթնիակ Կլայի բանտարկեալն հնդկաստան ոգի զնոսա եւս ի Կիպրոս աքսորեաց, եւ զՉէլէպի Մէհմէտ աղայն Եէնիչարեաց աղայ արար։ Եւ ի նոյնիմերի երկու՝ զառաջին՝ գիւանն արար եւ զուէլէֆէյս եւս Եէնիչարեաց։ Իսկ ի նոյնիմերի վեց չարաթի օր զվէլիրն մանդուլ արար եւ աքսորեաց զնա եւս, եւ արար վէլիր զփեսայն իւր զՀասան փաշայն եւ մինչ առ վէլիր եղեալ՝ Աւետիքեանքն արգուհալ արտաքին նմա յերկրորդում օրն եւ ելին ի թէրս-

խանէյէն մետասան ոգիք։ Եւ յորժամ տեօին զի երես գտան ի վէլիրէն, մասեանս արք չորք եւ արգուհալ արարին վասն չորս երեւելի մարդկան թէ ֆասանկ եւս եւ վասն ֆրանկութեան ի քիւրէկն էին արկեալ եւ ի ժամանակս զօղպայիցն ատանց ֆէրմանի եւլին։ Եւ վէլիրն կա հրաման զի կալցին զնոսա որ եւ կալան իսկ, եւ զարձեալ եւ հրաման առին եւ սոքա, զի առաջի Ղազի ասքէրին տեցեն զգատաստանս իւրեանց, որ եւ ժողովեցան անդ ի գուռն զաղասքէրին քահանայք եւ ժողովուրդք, ընդ որ յաղթեցան չարախօս Աւետիքեանքն, չորս մարդն եւ զնացին ի քիւրէկ։ Եւ ի նոյն Ուրբաթի օր մինչ թագաւորն ի վճարումս երթայր ի մկրիթն, արք երկու դարձեալ արգուհալ եւ տուն վասն այսմ պատճառի եւ նոքա եւս առաքեցան ի քիւրէկ։ Եւ առաջին արքն ու գիւք մետասան արք ելին ի քիւրէկէն, վասն անձանթութեան եւ նորապոյն լինելոյ վէլիրին, յորոյ մինն էր, Քալհանճի վարդապետն եւ Մարտիրոս-լաջ վարդապետն, ելին ի քիւրէկէն եւ կորեան եւ այլ ոչ եւս երեւեցան։ Դարձեալ յետ այսորիկ կալան զարս հէնդ, որ ծածկաբար եւ մերթ յայտնի նիսթէին զչարիս եւ զխոտութիւնս, յորոյ մինն էր Արզիման օղլի Սուրթատ Արքահամ վարդապետն եւ զրազիր եւ նոսայր Աւետիքին եւ Իզմիրցուն՝ Դիւալի Պետրոսն եւ երեք Եզընկայի Ղարիպ երէց, եւ տարեալ զնոսա յատուան Ղազի ասքէրին եւ վկայեցին քահանայք եւ ժողովուրդք բազումք, վասն նոցա չարաքարոյնութեանցն, եւ տեալ զհիւճճէթս նոցա եւ տարան սո վէլիրն եւ տեալ զնոսա ի վայր եւ բրածեմ արարին։ Նախ Արքահամ Ճանապաղ վարդապետին երկու հարիւր մետասան բիրտ հարին, եւ այլոցն նմանապէս ըստ կորդի եւ ըստ պատուոյ, եւ մինչ հարկանէին զնոսա, խրատէին զնոսա ի բաց կալ այսպիսի հակառակութեանց եւ չարութեանց, քանզի, ասէ, զուք վարդապետ էք եւ քահանայք, վասն որոյ ոչ է պարս ձեզ զհակառակութիւն եւ զվիճմունս արկանել ի մէջ ժողովրդեան ձերոյ, եւ խրատեալ արձակեցին։

¹ Ֆարաք, զիպող առիթ։

Արդ սկսեալ մեր ի պատմութիւնս ի Յու-
լիս ամսոյն եւ հասեալ ի դեկտեմբեր ամիս
դադարեցաք աստանօր, որ եւ յայսմ ամսոյ
տասն եւ ութին մեռաւ հին թագաւորն
Սուլթան Մուսթաֆայն, երէց եղբայրն Սուլ-
թան Ահմէտին, որ կեայ եւ վարէ զհայրե-
նածառանց թագաւորութիւնս իւր մինչեւ
ցայժմ, որ եւ վաղվաղակի եղեւ վրէժինդիր
դաւողացն իւրեանց, զսմանս փոփոխելով եւ
զբաղումս իսկ խեղդամահ առնելով ի ծովու
եւ զսմանս արտասահման առնելով ի հեռա-
ւոր տեղիս, եւ ինքն յաղթող երեւեալ յայսմ
վայրի:

Իսկ զՊատրիարքութիւնս երկուց աթո-
ոցն՝ յայժմս կան եւ վարեն իրկու Արքե-
պիսկոպոսոսնքս վերոյգրեալք, համակամ եւ
համախորհուրդ գլով իբրեւ զհայր եւ զոր-
դի, շնորհիւ եւ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ,
որ եւ մալթեմք յամենասուրբ Երրորդութե-
նէն զի պահեսցէ զսոսա սիրով անբաժանելի
եւ յաջողեսցէ զգործս սոցա ի փառս իւրոյ
միոյ եւ անբաժանելի Աստուածութեան, առ
ի շինութիւն Սուրբ Աթոռոցն եւ ի պայծա-
ռութիւնս նոցունց եւ ի խաղաղութեան
ժողովրդեան նորին. բարեխօսութեամբ եւ
մաղթանօք Սրբունոյ եւ միշտ կուսին Մա-
րիամու եւ Սրբոց Յակոբեանց առաքելոցն
եւ Սրբոյ Հօրն մերոյ Դրիգորի Լուսաւորչին
եւ Սրբոյն Յովհաննու Ոսկե(քե)րան Հայրա-
պետին եւ ամենայն Սրբոց. ամէն:

Որոց աղօթիւք նա եւ զձեզ եւ զմեզ եւ
զամենայն Բրիստոնեայս փրկեսցէ բարերարն
Աստուած ի խստասիրտ եւ յանգգամ արանց
եւ եւս եւ այնպիսեացն զլոյս գիտութեան եւ
զհոգի զգաստութեան շնորհեսցէ. զի խո-
տորեալք ի չարէ եւ հետեւելով ճշմարիտ
բարւոյն Տեառն մերոյ Յիսուսի Բրիստոսի Աս-
տուծոյն մերոյ, որոյ մշտնջենաւոր տէրու-
թեան եւ անվախճան թագաւորութեանն
ընդ Հօր եւ ընդ Սուրբ Հոգւոյն վայելէ փառք
եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից ամէն:

Վ Ե Ր Զ

Տ Ե Ա Ռ Ն Մ Ե Ր Ո Յ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

(Շար.)

12. Վերջապէս, հազիւ թէ հաստատեց
այս խորհուրդը, նոյն ինքն աստուածային
հեղինակն սկսաւ զայն մատակարարելու. վասն
զի հին աւանդութիւն մըն է թէ նոյն Յոր-
դանան գետին մէջ Յիսուս Բրիստոս մկրտած
ըլլայ իր ամենասուրբ մայրը, Յովհաննէս
Մկրտիչը, եւ քիչ ատեն վերջը Ս. Պետրոսը,
Ս. Յակոբոսը, Ս. Յովհաննէսն ու միւս ա-
ռաքեալները. եւ ստոյգ գիտենք Ս. Աւետա-
րանէն որ Յիսուս Բրիստոս իր մկրտութենէն
վերջը սկսաւ ինքն ալ մկրտել (Յովհ. Գ.
24): Եւ եթէ երկրորդ անգամ Հրէաստան գա-
լով իր առաքեալները իրեն համար կը մղըր-
տէին (Անդ, Գ. Գ. 2):

Արդ՝ ինչպէս որ նոյն ինքն Յիսուսի Բրիս-
տոսի մեզի տուած զաղափարին համաձայն,
Մկրտութիւնը վերստին ծնունդ մըն է, այն-
պէս ալ այսօր նոր Ագամը սկսաւ մարդոց
նոր կեանքի ծնունդ տալ, մինչդեռ հին Ա-
գամը մահուան ծնունդ տուած էր: Սկսաւ
կազմուիլ նոր ընտանիք մը, նոր սերունդ մը
սուրբերու՝ հին Ագամին դատապարտուած
սերունդին հակառակ: Ո՞վ խորին եւ զար-
մանալի գաղտնիք Աստուծոյ իմաստութեան
արժանի, որ մկրտութեամբ հոգեւոր ծնունդ
մը հաստատեց, որով Յիսուսի Բրիստոսի չը-
նորհքը կը տարածուի, ինչպէս որ մարմնա-
ւոր ծննդեամբ կը տարածուի Ագամայ մեղ-
քը. ուստի միեւնոյն մարդիկ, որոնք հոգ-
ւոյ նկատմամբ նախ կը ծնանին մեղաւոր եւ
իբր աստանայի որդիներ, վերստին կը ծնա-
նին արդար եւ իբր Աստուծոյ որդիք, որով
վերջապէս նոյն իսկ մարմնաւոր պայմանի
մէջ մահկանացու եւ չարչարելի ծնանելով
մէկտեղ անչարչարելի եւ անմահ կը դառնան:

13. Բայց այս խորհուրդին մեծութիւնը,
վսեմութիւնը եւ կարեւորութեանը պայծա-
ռագոյն կ'երեւայ նաեւ այն շքեղ կերպերէն,
որոնցմով կ'արտայայտուի, անոր մէջ իրենց
լրութիւնը կը ստանան, եւ զայն կ'ուզեմ հոս
մատնանշել, որպէս զի բացայայտ երեւա

երկու կտակարաններուն փոխադարձ կապակցութիւնն ու վկայութիւնը . Ս . Պօղոսին ըսածին համաձայն Հինը՝ Նորին խորհուրդներուն յառաջընթաց պատմութիւնը եղաւ . և թէ ո՛րքան մեծ , վսեմ ու չքեղ է քրիստոնէական կրօնքին անտեսութիւնը :

Նախ խորհեցէ՛ք կ'ըսէ Ս . Հերոնիմոս . Մկրտութեան Խորհուրդին որչափ հին և յարգի ըլլալը . քանի որ նոյն ինքն Աստուած աշխարհիս սկիզբէն ուղեց զայն խորհրդանշել . վստահ Մենդոց Գրքին մէջ գրուած է թէ ստեղծողին ձեռքէն հազիւ ելած՝ երկիրը պատող առաջին ջուրերուն վրայ՝ Տիրոջ Հոգին կը պտտէր , չէ թէ զգալի կերպով մը . այլ՝ Ս . Օգոստինոսին խորիմաստ և նրբամիտ գաղափարին համեմատ՝ այն կերպով ինչպէս որ ճարտարապետին մտածմունքն ու կամքը կը լածի իր մտքին ու ձեռքին արտադրելիք գործին վրայ : Արդ՝ ո՞ր խորհուրդը ուղեց արդեօք նշանակել Ս . Գիրքը այս խօսքերով . անշուշտ այն խորհուրդը (կ'ըսէ Ս . Հերոնիմոս) որով Հոգին Սուրբ արծառոյ նման կը հանգչի Մկրտութեան ջուրերուն վրայ . զանոնք կը ծածկէ և իւր աստուածային ցերմութեամբը Աստուծոյ զաւակներ կը ծնուցանէ չնորհք և կեանք տալով : Եկեղեցին ալ նոյն կարծիքը յառաջ կը բերէ Մկրտութեան Աւագանքը օրհնած պահուն :

Ո՛հ , ինչպէս արտայայտիչ , ո՛րքան չքեղ , ո՛րչափ վսեմ է այս խորհրդանիշ պատկերը : Երկիրը խոսքան և ամուլ էր և խոր խաւարով պատած (Մեն . 1) , և միայն ան ատեն սկսաւ բուսականութիւն ունենալ և տունկեր ու կենդանիներ արտադրել՝ երբ Աստուծոյ Հոգին արարչագործութեան ջուրերուն վրայ հանգչեցաւ : Ուրեմն միեւնոյն կերպով աշխարհը յանցանքներու խառնաշփոթ վիճման էր , ամենազգի մոլութեանց խաւարով պարուրուած՝ և միայն Հոգւոյն Սրբոյ՝ Մկրտութեան ջուրերուն վրայ իջնալէն վերջը Աստուծոյ որդիներ , բոյսեր և ամէն . առաքինութեանց պատուիրներ բողբոջեցնելն երեւցաւ : Ուրեմն բովանդակ ստեղծագործութիւնը որ կը սկսի Տիրոջ Հոգիէն ու ջրերէն , օ-

րինակը , նախերգանքն ու մարգարէութիւնը եղաւ , թէ՛ ամբողջ փրկագործութիւնը՝ Հոգւոյն Սրբոյ՝ Մկրտութեան ջուրերուն միանալէն պէտք էր յառաջ դար . ինչու որ , ինչպէս բնական կարգի մէջ նախնական ջուրերը անպիտան էին և բանի մը չէին ծառայեր մինչև որ խորհրդաւորապէս Հոգին Սուրբ անոնց չի միացաւ , այնպէս ալ , կ'ըսէ Ս . Ամբրոսիոս . հոգևորին մէջ՝ ամէն ջուր մեղքերը մաքրելու կարող չէ , հապա այն ջուրը կրնայ՝ որուն միասնական կերպով Զեւը միանալով , Հոգին Սուրբ կ'իջնէ , և Յիսուսի Քրիստոսի չնորհքը կը բովանդակէ (Յղգս . խորհր . Գիրք Ա .) : Անոր համար Ս . Պօղոս ըսած է թէ՛ մկրտութեան աւագանին ջուրերուն լուացումը՝ հոգիները մաքրելու ազդեցութիւնը կեանքի մեծ խօսքէն՝ իրեն ընկերացող ձեւէն կը ստանայ (Եփես . 6 .) :

14 . Եւ ի՞նչ կը նշանակէին ջրհեղեղը , փայտաշէն տապանը , ապաւն ու աղաւնին , Ախ , կը հասկնամ , պիտի բացալանչեմ Ս . Ամբրոսիոսի հետ . լաւ կը հասկնամ անոնց արտայայտել ուղած խորհուրդը : Զրհեղելին տապանակը՝ Նոյի տապանը փութացող ուրախութեան և խաղաղութեան աւետարեք աղաւնին , այն մարգարէական աղաւնին էր որ հիմա եկաւ մկրտութեան պահուն Յիսուսի Քրիստոսի Եկեղեցին մխիթարելու համար : Ս . Մաքսիմոս ալ մեղի կ'ըսէ . մարգահեղձ ջուրերը , որուն մէջ կորսուեցան մարդիկ , ինծի կը ներկայացնեն Մկրտութեան կենսապարպել ջուրերը , որոնց մէջ կը խորասուզի և կը ջնջուի ամէն յանցանք : Աղաւը՝ որ տապանէն ելաւ ու այլ ևս չվերադարձաւ , ինծի կը յիշեցնէ սկզբնական մեղքը , որ մկրտութիւնով անգամ մը մեր հոգիէն ջնջուելով ալ չի վերադառնար զայն արատաւորելու : Աղաւնին որ կը վերադառնայ՝ ինծի կ'աւետէ զայն (զհոգին) պճնազարգող չնորհք : Տապանին փայտանիւթը Յիսուսի Քրիստոսի խաչափայտն է , որուն չնորհիւ միայն յաւիտենական անդունդին կոհակներուն մէջ խեղդամահ ըլլալէ զերծ կը մնան հոգիները : Ս . Պետրոս Ոսկեխօսը նոյնպէս ընդհնամարեց նախկին Աղաւնոյն մէջ նոյն խորհուրդը . ա-

ղաւնին (կ'ըսէ նա) որ Նոյի ատեն աշխարհի պատուհասին դադրիլը աւետեց, նշանակեց Յիսուսի Բրիստոսի Մկրտութեան ատեն Յորդանանու վրայ երեւցող աղաւնին, և յաւիտենական նաւարկութեան դադրիլն աւետեց: Ս. Ամբրոսիոս կ'ըսէ. այս տարբերութիւնը կայ որ ջրհեղեղի աղաւնին խաղաղութիւն և ապահովութիւն ցոյց տուաւ իր կտուցովը բերած ձիթենիի ձիւղով. եւ Յորդանանու աղաւնին մեզ կը խոստանայ երջանիկ յաւիտենականութիւն մը՝ յայտնուող աստուածութեան ապացուցով: Եւ ի՞նչպէս ա'րդեօք, կ'ըսէ Ս. Գրիգոր Նազիանզացին, կրնանք մտաբերել տապանը որ իր մէջ ապաւինող հոգիները կը տանի և զանոնք աշխարհաւեր խեղդամահէն կ'ազատէ, առանց Յիսուսի Բրիստոսի սրբազնասուրբ Մարմինը յիշելու. որ փրկութեան իրական տապանն է, և Յորդանան գետէն ելած պահուն հին Ադամը անոր մէջ թաղուած կը թողու, և ջրերէն դուրս կը հանէ իր աստուածային ձեռքերով և կը բարձրացնէ զէպի երկինքը, նաւարկութեան մատնուած աշխարհը:

Թարգմ.

Ս. Վ. ՄԵՂՄՈՒՆԻ

(Շարունակելի)

ԵՅԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՀԱՌԵԻՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԳՐԲԷՆ

ԳԻՐԷ Ա. — ԳԼ. ԺԶ. — Ս. Հարց օրինակներուն վրայ:

(Շար.)

Աշխարհիս օսար քիմ. սակայն Աստուծոյ մերձաւոր ու ընտանի քարեկամներ:

Իրենի իրենց կ'երեւային իբրեւ ոչինչ, եւ աշխարհիս առջեւ արհաւիրեալ. այլ Աստուծոյ սցաց քանկագին էին ու սիրեցեալ:

Ճշմարիտ խնամախօսեան մէջ կը կենային հասար. միամիտ հնազանդութեան մէջ կ'ապրէին, սիրոյ եւ հաւքերութեան մէջ կը շրջէին. եւ ասոր հաւար ամեն օր հոգեով կը յառաջադիմէին, եւ Աստուծոյ իմ մեծ շնորհի կը ստանային:

Յօրինակ տուեցան ամեն կրօնաւորներու, եւ պիտի որ ամենի ամէնի դրդին. յորդանան գետը յաւ յառաջադիմելու, իսկ յի գաղթելու թիւը՝ քույրեան անձնասուր ըլլալու:

Ս. ՖՐԱՆՉԻՍԿՈՍ ԳՍԱՒԵՐԵԱՆ

Քիչ մը վերջը ծանր կերպով հիւանդացաւ. Երբ հիւանդանոցին մէջ խշտակի մը վրայ խեղճօրէն պառկած էր, Ս. Հերոնիմոս գիշերը իրեն երեւցաւ և դինքը բժշկեց. Ս. Երկրի ուղեւորութիւնը անկարելի ըլլալով Յրանչիսկոս շարունակեց քարոզել, խոստովանեցնել, աշակերտել ընել հիւանդներուն և դերինքրուն. նոյն Պոյմիտ, յետոյ Հռոմ, ուր իր ընկերօրէնութիւնը փառեցաւ, մանաւանդ մեծ սովի մը ժամանակ, Վերջապէս Փորթուկոյի Յովհաննէս Գ. Թագաւորին խնդրանքին վրայ, Քաջանայապետը Իգնատիոսի հրամայեց որ իր քաջանանքն վեցը անոր տայ, որպէս զի երթման Աւետարանը քարոզեն արեւելեան Հրդեհաստանի մէջ. Ս. Հիմադրիլը միայն Յրանչիսկոս Գաւերեանը կրցաւ տալ:

Ն. Ս. առաքեալը 1610 Մարտ 15ին Հռոմէն մեկնեցաւ Փորթուկոյի գեապոնին ընկերակցութեամբ խեղճ ու կրակ կապայ մը, հին վերարկու մը և աղօթագիրք մը միայն ունենալով: Յոռաքով գնաց մինչեւ Լիսպոն, Յրանչիսկոս և Սպանիոյէն անցնելով, Չուզեց քնաւ իր ծնողքը տեսնել թէ եւ անոնց մօտէն անցաւ. կը վախճար որ չըլլայ թէ տեղի տայ ընտելեան բերումներուն և իր բաժանումը շատ դառն գայ անոնց: Երբ Լիսպոնի մօտ Գաւերի Դին հաւ մտաւ Փորթուկոյցի Փոլ Գամարինի և Յրանչիսկոս Մանսիլի Հայրերուն հետ, որոնք իր Միաբանութեան մէջ մտնելով ուղեցին իրեն հետեւի: Հետը կը տանէր չորս առաքելական թուղթեր, որոնց երկուքով Ս. Արթուրիւնը զանիկայօրէն նուիրակ կը կարգէր Արեւելքի մէջ և անոր կու տար շատ ընդարձակ իշխանութիւններ, Պարսկաստանի, Հնդկաստանի և Ճաբոնի մէջ հաւատքը ծաւալելու և հաստատելու համար. Իր առաքեալի պաշտօնը հաւուն վրայ սկսաւ, շարունակեց Մոպամպիթի կուսակալութեան մէջ, ուր հարկ եղաւ ելլել ժամանակ մը անցընել. ապա Մելիտանի և Սաթթորա կղզիին մէջ: Երբ հասան Կոստ, Հնդկաստանի մայրաքաղաքը, եպիսկոպոսներու և փոխարքաներու աթոռը և Արեւելքի մանէն վաճառաշահ վաճըր: 1642 Մայիս 6ին, գնաց ընակեցաւ անկելանոցի մը մէջ: Եւ Հնդկաստանի պահապան հրեշտակին և հոն առաջին անգամ Աւետարանը քարոզող Ս. Թովմաս առաքելին իր մեծարանքները մատուցանելէ յետոյ, գնաց ողջունեց եպիսկոպոսը որ կը կոչուէր Տօն Ժան տ'Ալլայինքէ, Յրանչիսկոսի կրօնաւոր, և նոյն ատենուան ամենէն առաքինի և բազմաբոլոր եկեղեցականներէն մին:

Իր առաջին հոգը եղաւ զարմանել, հրահանգել, միթաքել, կազգուրել հիւանդները: Ապա սկսաւ

բարենորոգել քաղաքը որ այսօրոգի տնկման մը մէջ կը դառնէր։ Որովհետեւ հոն կը տեսնուէին տակաւին բազմաթիւ կռապաշտներ, որոնց կեանքը տաւի անասնական էր քան մարդկայինը, և որոնք տսնն որ աստուածներ փոխելով ի պատիւ անոնց դարչելի հանդէսներ կը կատարէին։ Հոն ակդի կ'ունենային Քրիստոնէից մէջ, շուրթեան, հարճուեթեան, վաշխառութեան, վաճառանհնգութեան, մարդասպանութեան և ուրիշ երկնից շանթերը հրաւիրող անկարգութիւններ։ Այսպիսի աղէտներու դարման տանելու համար սկսաւ նախ տղոց քրիստոնէական վարդապետութիւն սորվեցնել։ Ապա բեմ ելաւ և որսաց մտութեան դէմ, և իր խօսքը պիտի ազդեցութիւն ըրաւ որ շահեցաւ ամէնէն խտասիրտ մեղաւորները և զոյժման դառն արգունքներ հոսեցաւ անոնց աչքերէն։ Յատկապէս ա՛յս միջոցին և այս մեծ յարգութեան համար սկսան զինքը Առաքեալը տնուանել, ինչպէս տառջ իր եռանդուն աստուածապաշտութեան համար կոչեր էին զինքը Յուրբ Հայրը։

ԼՈՒԻ ՎԷՐՅԵՆՅԻ ՆԵՐՐՈՂԸ

(Շար. եւ վերջ)

Եօթը տարի վերջը Իւնիսէրը նորէն ելաւ։ Ո՛չ տունը փոխուած էր ոչ ալ տանուտէրը։ Սուրբ Պետրոսի լուսան կը հաստատուի։ Քահանայապետական Զուգութեան և ռանկը կ'արժարժի Պրանսայի և ազնուական Գանատայի մէջ, որ միշտ անով վառ և բորբոք է, ինչպէս ես անձամբ տեսիւ եմ։ Մենթանա կ'երկուի. կարծես Եսայիի մատնեցով լարուած, յարգարուած քնարի մը վրայ. մանաւանդ անխաղաղութիւնը կը հաստատուի և կը պաշտպանուի։ Այս վերջին զինաշարժութեան արդիւնքը մէկուն մոքէն չէ ելած։ Օրագրողը անոր վերջ տուաւ ժպիտով մը, հաւատացեալը՝ հաւատքի զոյիւն, պայծառ, քաղցրոյր ձայնով մը, նման Սուրբ Զոհին՝ առջեւ հնչուած սրափողերու ներգաշնակութեան։

«Սոսկայի մարիկ մը, կը գրէ նա, կը պարուրէր Սուրբ Պետրոսը, որ զրեթէ խորասուզուած էր մթութեան մէջ։ Վարդապետութիւնը հրատարակուեցաւ փայլակներու եւ որոտումներու մէջէն։ Բազմութիւնն ու մանք կալիպանիզմի վրայ կը խորհէին եւ կ'ըսէին. «Թաղում մըն է այս»։ Ոմանք ապագային վրայ կը մտածէին եւ կ'ըսէին,

«Սինա լեռն հնք»։ Այս խօսքը լաւ եւս կը համապատասխանէ իմ հաւատքիս... Ճամբունիս այսուհետեւ կրնայ երկար ըլլալ։ Բայց հետեւինս է Մովսէս եւ Մովսէսէն աւելին։ Փառք ի բարձունս Աստուծոյ՝ եւ յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն։»

Լուիի օրերը կը յառաջանային։ Եւ երբ այն շուագներէն, ուր ամէնքնիս ալ քիչ մը կանգ կ'առնուէր, գոնէ լոկ զիտելու համար, վերահաս գիշերուան տխրութեան մէջ, մեր ետին երկնցած ստուերը, ինք կը թուէր իր ժամերը եւ հակառակ իր յաղթանակներուն որ շատ եւ նշանաւոր եղան, կը տեսնէր թէ անոնց մէջ զգուշակները աւելի են քան լիովին ուրախարարները։

